ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

11 նոյեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Անդրեասյանը, Անուշ Ասատրյանը, Գեվորգ Բաբայանը, Կարապետ Բադալյանը, Գեղանուշ Երանոսյանը, Արման Թադեվոսյանը, Կարինե Թովմասյանը, Արսեն Հարությունյանը, Հայկ Մելքոնյանը, Կարապետ Մեսրոպյանը, Մելիք Նազարյանը, Էվելինա Ոսկանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Վարդան Գաբրիելյան, Խորեն Արոյան, Նվարդ Սահակյան, Քոչար Խաչատրյան, Արկադի Մարտիրոսյան, Սուրեն Ամիրջանյան, Մանվել Առաքելյան, Լուսինե Աստաբացյան, Համասփյուռ Քերոբյան, Հասմիկ Ավետիսյան, Ռուզաննա Ալեքսանյան, Սիրանուշ Իսկանդարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Նորայր Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարդան Գաբրիելյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 65-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել ավագանու անդամների նախաձեռնած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 11-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քվեարկության արդյունքները.

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Կ. ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ
Ն. ԱՖՐԻԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ե. ՇԱԲՈՅԱՆ
Վ. ՍԱՐԳՍՅԱՆ
Լ. ՍԵՐՈԲՅԱՆ
Ն. ՎԱՆՅԱՆ
Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ե. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
Զ. ՕՍԵՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 319-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով, 142.2-րդ հոդվածի 5-8-րդ

մասերով, 142.3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 75-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և հաշվի առնելով թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը՝ որով վաղաժամկետ դադարեցվել է Դավիթ Համբարձումյանի ավագանու անդամի լիազորությունները ***Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացնելու օր սահմանել 2025 թվականի նոյեմբերի 17-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Կ. ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ
Ն. ԱՖՐԻԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ե. ՇԱԲՈՅԱՆ
Վ. ՍԱՐԳՍՅԱՆ
Լ. ՍԵՐՈԲՅԱՆ
Ն. ՎԱՆՅԱՆ
Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ե. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
Զ. ՕՍԵՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 320-Ա)*

Օրակարգի հարցերն ավագանու կողմից հաստատվելուց հետո ելույթով հանդես եկան Մասիս համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Նորայր Հակոբյանը, ավագանու անդամներ Նաիրա Վանյանը և Ելիզավետա Օհանջանյանը /ելույթները կցվում է ավագանու նիստի արձանագրությանը/:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԵՄ ՇԱԲՈՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԵՎՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԶՈՀՐԱԲ ՕՍԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝

Վարդան Գաբրիելյանը _____

Հարգելի գործընկերներ, սիրելի մասիսցիներ,

Այսօր մենք արձանագրեցինք, որ Դավիթ Համբարձումյանը վաղաժամ դադարեցնելով ավագանու իր լիազորությունները, օրենքի ուժով դադարում է նաև նրա, որպես համայնքի ղեկավարի լիազորությունները...

Հրաժարականի պատճառը մեկն է և հստակ, որ իր ապօրինի կալանավորումը և դատավճիռը որևէ վարկյան չխաթարի Մասիս համանքի բնակկոն զարգացմանը՝ վստահ լինելով իր համայնքային քաղաքական թիմի միասնության և ունակությունների վրա, ովքեր պատվով կկատարեն այդ աշխատանքները...

Այսինքն, մեր թիմի ղեկավար Դավիթ Համբարձումյանը ինչպես միշտ անձնական շահը ստորադասեց համայնքի շահից:

Համբարձումյանը այս պահին գտնվում է անազատության մեջ, որովհետև իր վստահությունը, ինքնավստահությունը, սկզբունքայնությունը, անփոփոխ և հստակ դիրքորոշումը և վերջապես ոչ միայն Մասիս համայնքում, այլ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ձևավորած բարձր հեղինակությունը փորձեցին ճնշել, չստացվեց և երբեք չի ստացվի...

Հավատում եմ, որ արդարադատությունը ի վերջո կհաղթի և շուտով ազատության մեջ կլինեն Դավիթ Համբարձումյանը և մյուս քաղբանտարկյալները...

Վստահ եմ, որ ես, ինչպես նաև շատ շատերը խոսելու ենք Համբարձումյանի մասին, բայց առավել վստահ եմ, որ Դավիթ Համբարձումյանի խոսքը լսելու ենք ողջ հանրապետությամբ՝ ազգովի...

Մի քանի թվերով ամփոփեմ այսօրվա խոսքս.

Դավիթ Համբարձումյանը 2016 թվականին ընտրվելով և ստանձնելով Մասիսի քաղաքապետի պաշտոնը համայնքի համախմբված բյուջեն կազմել է 687 մլն ՀՀ դրամ, իսկ արդեն 2021 թվականի նոյեմբերին, երբ լրացավ պաշտոնավարման ժամկետը կազմել է 2 միլիարդ 141 մլն ՀՀ դրամ, այսինքն 2016 թվականի համեմատ բյուջեն աճել է գրեթե 3.5 անգամ...

2021 թվականին իր գլխավորած թիմը հաղթանակ տանելով արդեն Մասիս խոշորացված համայնքի ընտրություններում 2022 թվականին բյուջեն կազմել է 5 միլիարդ 866 միլիոն ՀՀ դրամ, իսկ արդեն 2026 թվականին Մասիս խոշորացված համայնքի համախմբված բյուջեն պլանավորվում է 8 միլիարդ 260 միլիոն ՀՀ դրամ, որը 141 տոկոս գերազանցում է նախորդ ցուցանիշին:

Սրանք լոկ թվեր չեն, սրանք հսկայական աշխատանքի արդյունք են...

Աստված պահապան բոլորիս, շնորհակալություն:

Խմբագրեց Ֆ.Ա.

Մասիս համայնքի ավագանու հարգելի անդամներ

Այսօր մենք ապրում ենք մի ծանր ու ցավոտ ժամանակաշրջան, երբ մարդը բանտարկվում է միայն այն բանի համար, որ համաձայն չէ երկրի ղեկին նստած մարդու քաղաքականության հետ: Հայաստանյան բանտերն այսօր լիքն են քաղաքական բանտարկյալներով, դատարանները ծանրաբեռնված են շինծու քաղաքական գործեր քննելով, ոստիկանության եւ կարգ ու կանոն պաշտպանելու համար նախատեսված մյուս կառույցների հարյուրավոր աշխատալիցները զբաղված են մարդկանց հետապնդելով եւ քրգործեր կարելու կեղտոտ գործով:

Այսօր անզատության մեջ են հոգեւորականներ, սրբազաններ, բարերար, ինչը աննախադեպ իրողություն է մեր անկախ պետության պատմության մեջ:

Դավիթ Համբարձումյանի կալանավորումը սպասելի էր շատերիս համար, քանի որ նա այն բացառիկ մարդկանցից է, ով 2018-ից ի վեր, այս յոթ տարիների ընթացքում երբեք չսեղմեց Նիկոլ Փաշինյանի ձեռքը, երբեք նրան չդիմավորեց, եւ երբեք չդաձավ նրա վարած քաղաքականության սազանդարը:

Դավիթ Համբարձումյանն ու մյուս քաղբանտարկյալները իրենց անազատության մեջ ավելի ազատ են, քան շատ մարդիկ, ովքեր ազատության մեջ են, քայլում են, բայց վախենում են քաղաքական դիրքորոշում հայտնել:

Երբ ես առաջին անգամ եղա Մասիս քաղաքում, զարմացա, որ Հայաստանում դեռ կա այսպիսի հետամնաց ու անշուք քաղաք, ինչպես կասեր դասարականը՝ Մասիսը դժբախտ ու դժգույն քաղաք էր: Դա մինչեւ Դավիթ Համբարձումյանի քաղաքապետության Մասիսին էր: Երբ 2016 թ-ին հերթական ՏԻՄ ընտրություններում առաջին անգամ հանդիպեցի եւ հարցազրույց ունեցա երիտասարդ թեկնածու Դավիթ

համբարձումյանի հետ, հասկացա, որ նա հենց այն մարդն է, որ Մասիսիը դուրս կբերի այդ գորշությունից: Մեր առաջին հարցազրույցի վերնագիրը ես ձեւակերպեցի «Մասիսի նոր շունչը», որը տպագրվեց Առավոտ օրաթերթում: Հետագայում այս արտահայտությունը դարձավ քաղաքապետարանի, այսպես ասած՝ լոգոյի մի մասը: Հիմա չթվարկեմ այն բարեփոխումները, որոնք կատարեց Դավիթ Համբարձումյանը՝ իր քաղաքապետության տարիներին: Դա տեսնում են բոլորը, Մասիսում ապրողները: Մասիսը գորշ գյուղաքաղաքից դարձավ ծաղկուն, զարգացած ու հետաքրքիր քաղաք: Մասիսը նոր շունչ ստացավ:

Հարգելի մասիսցիներ, գիտեմ, որ այս իրավիճակը, ձեր ընտրած քաղաքապետի կալանավորումը շատերիդ մոտ առաջացրել է զայրույթ, վրդովմունք, հիասթափություն , ինչու չէ, նաեւ հուսահատություն: Բայց, եկեք արձանագրենք, որ այս ամենը անցողիկ է, անցողիկ են եկող-գնացող իշխանությունները, անցողիկ են նաեւ ձախորդ օրերը: Մենք անպայման կթերթենք մեր պատմության այս ամոթալի էջը եւ կվերականգնենք մեր ազգային արժանապատվությունն ու համազգային համերաշխությունը:

Համբերություն, ուժ ու տոկություն բոլորիս…

Աշխատանքը Օհանջանյան

Հարգելի պարոն Հակոբյան, հարգելի ավագանու անդամներ և ներկաներ, այսօր ուզում եմ խոսել Դավիթ Համբարձումյանի մասին և այն ջերմ ու մարդկային վերաբերմունքի, որ նա ցուցաբերել է, թե՛ մեր համայնքի բնակիչների, թե՛ Արցախից տեղահանված մեր հայրենակիցների նկատմամբ:
Լինելով Արցախցի, ունենալով առնչություն շատ Արցախցիների հետ, քաջատեղյակ եմ, Արցախից տեղահանված ընտանիքները, որոնք պատերազմից հետո ապաստան գտան Մասիսում, առաջին իսկ օրերից զգացին, որ իրենց կողքին կանգնած է համայնքի ղեկավար, ով ոչ թե պարզապես պաշտոնյա է, այլ մարդ՝ մեծ սրտով և պատասխանատվությամբ և իհարկե նրա ուժեղ թիմը ու ամբողջ համայնքի հայրենասեր մարդիկ:
Դավիթ Համբարձումյանը համայնքապետարանի աշխատակազմի և իր ընկերների հետ կազմակերպեց նրանց ընդունելությունը, ապահովվեց կացարանով, սննդով և անհրաժեշտ օգնությամբ: Սակայն ամենակարևորը այն հոգատարությունն ու ջերմությունն էր, որ նա ցուցաբերեց՝ անձամբ հանդիպելով այդ ընտանիքներին, լսելով նրանց ցավն ու կարիքները: Դավիթ Համբարձումյանը աջակցեց ոչ միայն նյութապես, այլ բարոյապես, օգնելով նրանց կրկին հավատալ ապագային: Դավիթ Համբարձումյանը մեծ հարգանքով է վերաբերվում զոհված հերոսների հիշատակին, նրա նախաձեռնությամբ կառուցվեց

զոհվածների հիշատակը հավերժացնող պանթեոնը, անցկացվեցին հիշատակի միջոցառումներ և հանդիպումներ հերոսների ծնողների հետ: Նա միշտ ընդգծել է, որ նրանց սխրանքը մեր խաղաղ կյանքի հիմքն է, իսկ նրանց ընտանիքներին ցուցաբերվող հարգանքը՝ բոլորիս սրբագույն պարտքը: Ես և ինձ բախտակից հարյուրավոր մայրեր այդ ամենը շատ լավ ենք զգացել: Բացի այդ՝ նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում երիտասարդությանը՝ մշտապես խրախուսելով նրանց սիրել հայրենիքը, լինել ակտիվ, ստեղծագործ և համայնքի կյանքին մասնակից: Նրա շնորհիվ մեր համայնքում ձևավորվել է հոգատարության, հարգանքի և միասնության մթնոլորտ: Դավիթ Համբարձումյանը իր գործով է վաստակել ժողովրդի հարգանքը: Եվ վերջում ուզում եմ ասել, որ միշտ լինելու ենք Դավիթ Համբարձումյանի կողքին և սատարելու ենք նրա իր սկսած բարի գործում: Հավատում ենք, որ պարոն Նորայր Հակոբյանը նույն նվիրվածությամբ և պատասխանատվությամբ կշարունակի Դավիթ Համբարձումյանի գործը, իսկ մենք՝ որպես ավագանու անդամներ և համայնքի բնակիչներ, միասնական կաշխատենք մեր համայնքի բարօրության համար: Ավարտելով խոսքս ուզում եմ ավելացնել իմ հերոս որդու վերջին խոսքերը, լավա լինելու սա հաստատ լավա լինելու:

Շնորհակալություն:

2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐԱՅԱՄԱՏՅԱՆ

	2025 թվականի նոյեմբերի 11-ի արտահերթ նիստ			
Հ/Հ	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ստորագրություն
1	Հակոբյան	Նորայր	Արեգի	
2	Եղիազարյան	Արսեն	Գագիկի	
3	Արամայիսյան	Կարեն	Գագիկի	
4	Օհաջանյան	Ելիզավետա	Գրիգորիի	
5	Օսեյան	Զոհրաբ	Հայկի	
6	Կարապետյան	Կարեն	Բաբկենի	
7	Մանուկյան	Հովհաննես	Լյովայի	
8	Շաբոյան	Երեմ	Մանվելի	
9	Ավանեսյան	Արթուր	Արկադիի	
10	Աֆրիկյան	Նունե	Ջանիբեկի	
11	Վարդանյան	Էդվարդ	Հրաչյայի	
12	Սարգսյան	Վարդուհի	Ռուբիկի	
13	Վանյան	Նաիրա	Մարտիկի	
14	Սերոբյան	Լևոն	Շմավոնի	
15	Նազարյան	Մելիք	Դիմիտրիի	
16	Մելքոնյան	Հայկ	Ներսեսի	
17	Թադևոսյան	Արման	Աշոտի	
18	Գասպարյան	Արամ	Վլադիմիրի	
19	Ասատրյան	Անուշ	Ռոլիկի	
20	Բաբայան	Գևորգ	Միշայի	
21	Հարությունյան	Արսեն	Մնացականի	
22	Ոսկանյան	Էվելինա	Համլետի	
23	Բաղալյան	Կարապետ	Նամեստի	
24	Մեսրոպյան	Կարապետ	Բագրատի	
25	Թովմասյան	Կարինե	Գևորգի	
26	Անդրեասյան	Արտակ	Մեհրաբի	
27	Երանոսյան	Գեղանուշ	Գառնիկի	